

Բացի դրանից, վիգոնի ֆաբրիկայի համար պահանջվում է բամբակե հիմնական մանվածք՝ 600—800 տ քանակով:

Տեքստիլ արդյունաբերության մասցուկների վերամշակման շնորհիվ կարելի է ստացված հումքից արտադրել մոտավորապես հետևյալ դորժականը:

1. Մահուրներ տղամարդկանց և կանաց կոստյումների համար, բամբակե հենքի ձեռավոր ոլորների թափոնային մանվածքի թեզանի կամքի:

2. Վերմակ՝ ցածր համարների թափոնային մանվածքի կամքից, երփներանգ գզվածքով:

3. Երփներանգ գործված ջալեր:

4. Արտահագուատ գործվածքներ:

5. Երկշերտ կամ բազմաշերտ գործվածքներ կոշկեղենի արդյունաբերության համար:

6. Ֆլանել:

7. Հատակները վլանալու, փոշի մաքրելու և կոշիկները սրբելու փալասներ:

8. Արդյունաբերական բամբակի զանազան տեսակներ:

9. Չգործված տեքստիլ (տերեկս տիպի)՝ ինքնաթիւների և ավտոմոբիլների կահույքը ծածկելու համար:

10. Հղկող սկավառակներ:

11. Կինոլեռումի գործվածքներ՝ տնային գործածության կանացի պայուսակներ:

Նախագծվող ձեռնարկության համար՝ կպահանջվի հետեւյալ բանակությամբ բանվորական ուժությամբ:

Թափոնային արտադրության համար՝ 100 հոգի վիգոնի արտադրության համար՝ 400 հոգի:

Ընդամենը՝ 500 հոգի

Ձեռնարկությունը կառուցելիս անհրաժեշտ է, որ նա մոտ լինի հումքի աղբյուրներին և երկաթուղուն: Նա շատ էլեկտրաէներգիա և ջուր չի սպառում:

Այսպիսով, Հայկական ՍՍՌ-ում թափոնների հավաքման ու վերամշակման մասնագիտացված ձեռնարկությունը կարելի է կառուցել երկաթուղուն մոտ գտնվող ամեն մի խոշոր բնակավայրում:

Սպառվող հումքի որակից և արտադրանքի ստացվող ասորտիմենտից ենելով, կարելի է վստահորեն ասել, որ նման ձեռնարկության կառուցվումը տնտեսապես իրեն կարդարացնի և հնարավորության կտա ավելի ռացիոնալ կերպով օգտագործել արժեքավոր տեքստիլ հումքը:

## Արտադրության մեքենայացում և ավտոմատացում

### ՊՈԼԻՄԵՐԱՑՄԱՆ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՑԻՆ ՌԵԺԻՄԻ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ա. ԴՐԱՅՎՈՎ  
Ինժեներ

Ա. Մ. Կիրովի անվան գործարանում քլորպարենի էմուլսիայի պոլիմերացման պրոցեսը կատարվում է էմալապատված ապարատներում, պարբերական եղանակով: Այդ ապարատներն

ունեն պրոպելլերային խառնիչներ՝ ու շապիկներ՝ սառեցնող աղաջրի շրջապտուսի համար: Քլորպարենի պոլիմերացման ժամանակ տեղի է ունենում էկզոպերմիկ ռեակցիա, որի դեպքում

բլորոպղինի յուրաքանչյուր կգ-ից անջատվում է 200 կալ. շերմություն: Նախապես տրված ջերմային ռեժիմը պահպանելու համար անհրաժեշտ է ավելցուկային շերմությունը հեռացնել: Այդ հեռացումը կատարվում է ապարատի շապիկին  $+6^{\circ}\text{C}$  շերմաստիճանի սառը ալզաջուր մատուցելու, ապարատի խառնիչը գործարկելու և կանգնեցնելու (որը կատարվում է ձեռքով), ինչպես նաև պոլիմերիզատորին պարբերաբար ռեղմած օդ մատուցելու միջոցով:

Շեակցիայի շերմությունը հեռացնելու և կարգվորելու նշված եղանակները չեն ապահովում պրոցեսի նորմալ ընթացքը: Ցեխում հաճախ ստեղծվում էր մի դրություն, երբ վերարից խուսափելու համար հարկ էր լինում իշեցնել պոլիմերիզատի շերմաստիճանը: Վթարները կանխելու համար ձեռք առած միջոցները առաջ էին բերում պոլիմերացման պրոցեսի ընթացքի աննորմալություններ, խախտում էին սահմանված շերմաստիճանային ռեժիմը, հանգեցնում պոլիմերիզատորից բովախառնուրդի տեղափոխելուն: Այդ դեպքում տեղի էին ունենում պրոդուկտի կորուստներ, աշխատանքային շենքերը լցվում էին գազով, խախտվում էր պոլիմերացման խորությունը, որը վերջին հաշվով բացասաբար էր ոնդրադառնում կառլուկի որակի վրա, այսինքն՝ վատթարացնում էր նրա ստանդարտությունը ըստ պլաստիկության և մյուս ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշների:

Պոլիմերացման պրոցեսի նշված անկատարելությունները առաջ էին բերում չափով բարոպղերի կորուստներ, որը, նախնական տվյալներով, տարեկան կազմում էր 100 հազ. ոռութիւն:

Խառնիչի գործարկման ու կանգնեցման ձեռքով աշխատելու եղանակը, օդի մատուցումը պոլիմերիզատին, շերմաստիճանի բարձրանալու դեպքում ապարատում պարունակվող նյութի խառնումը փայտե թիերով և մյուս պրոցեսները հնարավորություն չեն տալիս ճշտորեն և սիստեմատիկաբար վերահսկել պոլիմերացման տեխնուգիական ռեժիմը:

Ցեխի կանոնավոր աշխատանքն ապահովելու նպատակով իրականացված է պոլիմերացման շերմաստիճանային ռեժիմի ավտոմատիկ կար-

գավորումը պոլիմերիզատորի խառնիչի գործարկման և կանգնեցման միջոցով (նախապես ընտրված պտույտների թիվը՝ 210 պտ/րոպի), նայած պտլիմերիզատորի մեջ պարունակվող նյութի շերմաստիճանին:

Պոլիմերիզատորներում շերմությունը կարգավորելու համար կիրառվում է 1-ին նկարում բերված էլեկտրական սիստեմն: Ամեն մի պոլիմերիզատորի վրա տեղադրված է փոփոխական հոսանքի ավտոմատիկ էլեկտրոնային կամրջակ, որն ունի էՄԴ-212 տիպի պոցիզիոն էլեկտրական կարգավորիչ:

Եթե շերմաստիճանը բարձրանում է ըստ ռեժիմի սահմանված մեծությունից, էլեկտրոնային կամրջակի առավելագույն կոնտակտը միանում է, և միջանկյալ ռելեի կոճը սնվում է: Միջանկյալ ռելեն իր նորմալ բացված կոնտակտներով փակում է գործարկիչի մագնիսական կոճի շղթան, աշխատանքի է դնում շարժիչը և ռեգուլյորի միջոցով՝ պոլիմերիզատորի խառնիչը: Պոլիմերիզատորի խառնիչի աշխատելու ժամանակ, լատեքսի էմուլսիայի խառնվելու հետևանքով մըտնող աղացուրը ( $6^{\circ}\text{C}$ ) մեծացնում է շերմության հեռացումը պոլիմերիզատորից, ինչպես նաև արգելակում է պոլիմերացման պրոցեսը (հետեւապես և շերմության անջատումը) օդի թթվածինը էմուլսիայի միջոցով լիւթու հաշվին:

Ցերմության անջատման նվազումը, ինչպես նաև աղացրի միջոցով հեռացվող շերմության ավելացումը իշեցնում են պոլիմերիզատորի շերմաստիճանը: Էլեկտրոնային կամրջակի առավելագույն կոնտակտորն անջատվում է, խզելով միջանկյալ ռելեի կոճի սնվումը: Ռելեի կոնտակտներն անջատվում են, հոսանքագրկելով գործարկիչի մագնիսական կոճը, և շարժիչը կանգ է առնում:


Խառնիչի կանգ առնելու կապակցությամբ նվազում է պոլիմերիզատորից հեռացվող շերմությանը, ինչպես նաև դադարում է օդի թթվածնի կրանումը էմուլսիայի միջոցով, պոլիմերացման պրոցեսը վերականգնվում է, և շերմաստիճանը սկսում է բարձրանալ:

Ապարատը բեռնավորելիս ինքրենդիենտները խառնելու համար հերթափոխի պետի սենյակն են դրված բերված շարժիչի ձեռքով գործարկման և

կանգնեցման կոճակները: Բացի դրանից, գոյություն ունի նաև խառնիչի աշխատանքի լուսային ազդանշում, որը տեղադրված է գործարկիչի հետ միասին:

Փոփոխական հոսանքի բոլոր էլեկտրոնային կամրջակները, ինչպես նաև տեխնոլոգիական ուժիմի մյուս պարամետրները վերահսկելու և կարգավորելու համար անհրաժեշտ գործիքներն ու կարգավորիչները դուրս են բերված հերթափոխի պետի սենյակը և մոնտաժված են կենտրոնական վահանի վրա:

Թյունը ըստ պլաստիկության, նվազել է սկորչինգը (պլաստիկության իշեցումը նախրիտի տաքացման գեպքում), վերայպել է միևնույն պարտիայի նախրիտի բաժանումը մի քանի տեսակների՝ պլաստիկության տարրեր ցուցանիշների պատճառով: Հնարավորություն է ստեղծվել հավասարաշափ կերպով վարել տեխնոլոգիական պրոցեսը, որը բացառում է պոլիմերիզատի շերժաստիճանի բարձրացումը ուղղամենտով թույլատրված մեծությունից և, հետևաբար, բլորոպրենի գոլորշիացումը: Այդ պատճառով, պոլիմերացման շերմաստիճանի ավտոմատիկ կարգավորման



Նկ. 1. Պոլիմերիզատորների շերմաստիճանի ավտոմատիկ կարգավորման սխեման:

1—պայմերիզատոր, 2—խոռնիչ, 3—ուղղուկտոր, 4—մուտոր, 5—գործարկիչ, 6—միջանկյալ ռելէ, 7—շերմաստիճանի կարգավորիչ, 8—դիմադրության ջերմաչափ, 9—արանսֆորմատոր, 10—ազդանշման լամպ, 11—սպղակի աղաջուր, 12—հետաղարձ աղաջուր:

Պոլիմերացման շերմաստիճանային ռեժիմի ավտոմատիկ կարգավորման նկարագրված եղանակի իրականացումը հնարավորություն է տվել պոլիմերացման պրոցեսը վարել ուղղամենտով նաև նախատեսված շերմաստիճանների սահմաններում, մինչև  $\pm 1^{\circ}\text{C}$  ճշտությամբ, մինչդեռ ձեռքով կարգավորելու դեպքում շերմաստիճանային տատանումները կազմում էին 5—6°C:

Դրա շնորհիվ զգալիորեն բարելավվել է նախրիտի որակը, մասնավորապես նրա համասեռու-

նշված եղանակը արմատավորելուց հետո, մի կողմից, մի քանի տասնյակ անգամ նվազել է բլորոպրենի պարունակությունը աշխատանքային սենյակի միջնորդում, դրանով իսկ բարելավվել են աշխատանքի պայմանները, իսկ մյուս կողմից, ստեղծվել է ռեալ հնարավորություն քրոպրենի տեսակաբար ծախսը իշեցնելու համար: Ավտոմատիկային անցնելը աղատեց սպասարկող անձնակալների լուսոնիշները ձեռքով գործարկելուց ու կանգնեցնելուց, պոլի-

մերիզատին օդ մասուցելուց, ջերմաստիճանի բարձրացման դեպքում ապարատում պարունակվող նյութը թիերով խառնելուց, և հնարավորություն տվեց ապարատավարների ամբողջ ուշագրությունը կենտրոնացնել տեխնոլոգիական պրոցեսը ճիշտ վարելու վրա (ակտիվատորի, ինի-

ցիատորի, ստարիլիզատորի և այլ նյութերի ժամանակին մատուցումը):

Ուել հնարավորություն է ստեղծվել բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը մեկ ապարատավարի կողմից սպասարկվող պոլիմերիզատորների քանակն ավելացնելու միջոցով:

## ՍՏԵՆԴ՝ ԿՈՄՊՐԵՍՈՐԻ ԿԱՓՈՒՅՐԻ ՏԱԽՏԱԿՆԵՐԸ ԿԻՊԱՀՆ ԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԻԵԺԵԲԵՐ

Երևանի կոմպրեսորների գործարանի թողարկած կոմպրեսորներում կափույրի տախտակները ձեռքով էին կիպահղկվում: Մի տախտակի մակերնությունը կազմում է 0,093 մ<sup>2</sup>, և նրա՝ ձեռքով կիպահղկումը մեկ բանվորի միջոցով տևում էր 20 ժամ:

Գործարանի աշխատակիցները Է. Թաթոնցի և Ռ. Պողոսյանի առաջարկով նախագծվել, պատրաստվել և արտադրության մեջ է ներդրվել 8 իլ ունեցող հատուկ ստենդ, որը ձեռքով կատարվող աշխատատար կիպահղկումը փոխարինել է մերենայով:


Իլերը դասավորված են երկու շարքով, մեկ շարքում՝ 4 հատ: Ցուրաքանչյուր իլլը պտտական շարֆում է ստանում ընդհանուր փոխհաղորդիչ լիսեռից, որի վրա տեղադրված է մի զույգ կոնաձև ատամնանվակ (կարելի է տեղադրել նաև մի զույգ շեղատամանանվակ): Ցուրաքանչյուր իլլի պտտման արագությունը 90 պա/րոպե է: Փոխհաղորդիչ լիսեռները շարժման մեջ են դրվում էլեկտրաշարժիչ օգնությամբ՝ ոեղուկտորի միջոցով (նկ. 1):

Իլերի ծայրերում մոնտաժված են ոետինն սկավառակներ, որոնք կափույրատախտակները գամասեղներով ամրացնելու համար սկավառակի կենտրոնից տարբեր հեռավորությունների վրա անցներ ունեն:

Մի կափույրանի տախտակը անշարժ կերպով տեղադրվում է ստենդի սեղանի վրա, իսկ նրա

վրա, ոետինն սկավառակի օգնությամբ, պտտվում է մյուս կափույրի տախտակը, ինչպես իր առանցքի շուրջը, այնպես էլ արտակենտրոն ձևով: Այդպիսի պտույտը լիովին պահպանում է կիպահղկման կանոնները:

Տվյալ առաջարկության արմատավորումը մեծ



Նկ. 1. Ստենդի սխեման:  
1—էլեկտրաշարժիչ, 2—ոեղուկտոր, 3—կոնաձև զույգ,  
4—փոխհաղորդիչ լիսեռ, 5—իլլիկ, 6—ոետինն սկավառակ,  
7—գամասեղ, 8—շարժմող տախտակ, 9—անշարժ տախտակ, 10—ստենդի սեղան, 11—զլանաձև զույգ:

շափով բարելավել է տեխնոլոգիական պրոցեսը, բարձրացրել արտադրանքի որակը: Դրա շնորհիվ 8 բանվորի աշխատանքը փոխարինվել է մեկ մերենայով:

Գործարանը ստացել է 120 հազ. ոուրլու տարեկան պայմանական տնտեսում: